# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շինարարական վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/79 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում արդյունքում 2025թ. օգոստոսի 27-ին կնքված N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/79-1 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ**. Կապալառուի կողմից ստացված գրության և պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ Պայմանագրի կատարման ժամկետի երկարացման անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն**. Կատարված փոփոխությունների արդյունքում.

1.1 Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը20» սյունակում նշված աշխատանքի կատարման ժամկետը 1-ին չափաբաժնի մասով խմբագրել և ներկայացնել նոր շարադասությամբ հետևյալ կերպ. «Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և համապատասխան տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 100 օրացուցային օրվա ընթացքում»:

1.2 Պայմանագրի Հավելված N 2.1-ով ներկայացված «ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ի և 20.02.2026թ. կնքված համաձայնագիր 1-ի Հավելված N 1.1-ով ներկայացված «ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ի փոխարեն հիմք ընդունել և հաստատել կից Հավելված N 1.1-ով, ներկայացված «ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ը:

**Փոփոխության հիմնավորում**. Հիմք ընդունելով Պայմանագրի 1.1, 8.5 և 8.8 կետի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը:

**Պատվիրատու**՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ